ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հոկտեմբերի 2023 թվականի N 1223-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽԱՆՋՅԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ԱՇՈՏ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին կետով, 163-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խանջյանի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Աշոտ Եղիազարյանի 2023 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 5675 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խանջյանի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Աշոտ Եղիազարյանին տրամադրել 2023 թվականի ամենամյա արձակուրդի 10 աշխատանքային օրերը՝ 2023 թվականի հոկտեմբերի 16-ից:
2.Նշված ժամանակահատվածում «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խանջյանի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Աշոտ Եղիազարյանի պարտականությունները վերապահել «Հացիկի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ Բագրատ Մուխաելյանին:
3.Աշոտ Եղիազարյանին՝ աշխատանքի ներկայանալ 2023 թվականի հոկտեմբերի 30-ին:
4.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խանջյանի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաշվապահին՝ ի գիտություն:
5.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023 թ. հոկտեմբերի 11
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հոկտեմբերի 2023 թվականի N 1224-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ, ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի քաղաքային համայնքի ղեկավարի 2013 թվականի փետրվարի 14-ի թիվ 66-Ա որոշմամբ՝ Արմավիր քաղաքի Չարենցի փողոցի թիվ 43 տաղավար ժամանակավոր հասցեում գտնվող 4.0 (չորս) քմ մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով 3 (երեք) տարի ժամկետով հատկացվել է քաղաքացի Առնակ Աբրահամյանին, համաձայն որի Արմավիրի քաղաքային համայնքի և Առնակ Աբրահամյանի միջև 2013 թվականի ապրիլի 08-ին կնքվել է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիր՝ /սեղ. նո 1876/:

Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի գործողության ժամկետը լրացել է:

Քաղաքացի Առնակ Աբրահամյանը մինչ օրս բարեխղճորեն և լրիվ ծավալով կատարել է իր՝ կառուցապատողի պարտականությունները:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 441-րդ, 466-րդ, 468-րդ հոդվածների 1-ին մասերով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ, 60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիրի քաղաքային համայնքի և քաղաքացի Առնակ Աբրահամյանի միջև 2013 թվականի ապրիլի 08-ին կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի 9.1 կետն, ընդառաջելով քաղաքացի Առնակ Աբրահամյանի 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 5702 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արմավիրի քաղաքային համայնքի և քաղաքացի Առնակ Աբրահամյանի միջև 2013 թվականի ապրիլի 08-ին կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրում՝ /սեղ.նո 1876/ կատարել փոփոխություններ.

1) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի գործողության ժամկետն երկարացնել մինչև 08.04.2028 թվականը:

2) Պայմանագրի 1.1 կետում «5000 (հինգ հազար)» բառերի փոխարեն կարդալ՝ «12000 (տասներկու հազար)» բառերը:

3) Պայմանագրի 5.1 կետում նշված կառուցապատման իրավունքի տարեկան վճարը կազմում է «20000 (քսան հազար)» բառերի փոխարեն կարդալ՝ «48000 (քառասունութ հազար)» բառերը:

2. Իրավաբանական բաժնին՝ քաղաքացի Առնակ Աբրահամյանի հետ կնքել համաձայնագիր՝ 2013 թվականի ապրիլի 08-ին՝ /սեղ. նո 1876/ կնքված համայնքային

սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023թ. հոկտեմբերի 13
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հոկտեմբերի 2023 թվականի N 1225-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> N 600-Ն որոշման 1-ին հավելվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետությանկառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ դեկտեմբերի 5-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, ըստ ժառանգության վկայագրի 1.01.2023թ և Քնարիկ Հակոբյանի 21.06.2023թ. թիվ 3732 դիմումը և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Մայիսյան գյուղի 04-043-0037-0033 կադաստրային ծածկագրում գտնվող կառույցը իրականացվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Քնարիկ Հակոբյանին, Հասմիկ Հակոբյանին, Աշխեն Հակոբյանին և Հայկ Հակոբյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայքնի Մայիսյան գյուղի 04-043-0037-0033 կադաստրային ծածկագրում գտնվող գույքային միավորների՝ 279.0քմ օրինական հողամասի վրա 1996թ. կառուցված 26.6 քմ մակերեսով անասնաշենքը ճանաչել օրինական:

2.Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետի համաձայն ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:

3. Քնարիկ Հակոբյանին, Հասմիկ Հակոբյանին, Աշխեն Հակոբյանին և Հայկ Հակոբյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայքնի Մայիսյան գյուղի 04-043-0037-0033 կադաստրային ծածկագրում գտնվող գույքային միավորների՝ 279.0 քմ օրինական հողամասի վրա 2008թ. կառուցված 21.6 քմ արտաքին և 18.9 քմ ներքին մակերեսով մառանը և 2008թ կառուցված 32.8 քմ արտաքին և 29.6 քմ ներքին մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական:

4.Ընդունել ի գիտություն,որ

1)կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2)շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5.Սահմանել, որ ինքնակամ կառույցն իրականացրած անձը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում,Արմավիր համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով հաշվարկված՝ ընդհանուր 54.4 քմ մակերեսով ինքնակամ օժանդակ շինությունների օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 6-ապատիկի չափով՝ 725.4 ՀՀ դրամ՝ ընդամենը 39642(երեսունինները հազար վեց հարյուր քառասուներկու) ՀՀ դրամ:

6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայքնի Մայիսյան գյուղի 04-043-0037-0033 կադաստրային ծածկագրում գտնվող գույքի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2022JBHARP:

7. Քնարիկ Հակոբյանին, Հասմիկ Հակոբյանին, Աշխեն Հակոբյանին և Հայկ Հակոբյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայքնի Մայիսյան գյուղի 04-043-0037-0033 կադաստրային ծածկագրում գտնվող գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, գյուղ Մայիսյան 3-րդ փողոց, 35/1 հողամաս:

8.Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. հոկտեմբեր 13
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հոկտեմբերի 2023 թվականի N 1226-Ա

ՌԱԴԻԿ ՀԱԿՈԲԻ ԵՆՈՔՅԱՆԻՆ, ԿԱՐԻՆԵ ՍՈՒՐԵՆԻ ԼՈՒՍԻԿՅԱՆԻՆ, ՀԱԿՈԲ ՌԱԴԻԿԻ ԵՆՈՔՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻՆ ՏԱԼ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 45-րդ և 46-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու 2021թ. դեկտեմբերի 27-ի թիվ 126-Ն որոշումը, Հակոբ Ենոքյանի 11.10.2023թ. թիվ 5678 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ռադիկ Հակոբի Ենոքյանին, Կարինե Սուրենի Լուսիկյանին, Հակոբ Ռադիկի Ենոքյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղում գտնվող 0.0991 հա տնամերձ հողամասին (սեփականության վկայական 2433073) տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, գյուղ Սարդարապատ 26-րդ փողոց, 4 բնակելի տուն:
2.Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:
4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023թ. հոկտեմբերի 16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1227-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՔԻ ԱՅԳԵՎԱՆ ԳՅՈՒՂ, 1-ԻՆ ՓՈՂՈՑ 42 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԷԴՈՒԱՐԴ ՌՈԲԵՐՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ,ՆԱՐԻՆԵ ՍՏՅՈՊԱՅԻ ԲԱՐԵՅԱՆԻ,ԳՈՌ ԷԴՈՒԱՐԴԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԵՎ ԱՐՏԱԿ ԷԴՈՒԱՐԴԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ԱՎԵԼ ՀՈՂ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի ավագանու 2021 թ. դեկտեմբերի 27-ի թիվ 126-Ն որոշումը և Էդուարդ Ռոբերտի Հովհաննիսյանի 02.10.2023թ. թիվ 5498 դիմումը և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Այգեվան գյուղում գտնվող 04-062-0026-0024 կադաստրային ծածկագրում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդթվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին՝

ՈՐՈՇՈՒՄԵՄ

1.Քաղաքացի Էդուարդ Ռոբերտի Հովհաննիսյանին,Նարինե Ստյոպայի Բարեյանին,Գոռ Էդուարդի Հովհաննիսյանին և Արտակ Էդուարդի Հովհաննիսյանին

պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Այգեվան գյուղում գտնվող 04-062-0026-0024 կադաստրային ծածկագրով 1600.0 քմ մակերեսով տնամերձ հողամասին կից ավել զբաղեցրած 162.0 քմ մակերեսով հողամասը անհատույց հատկացնել նրանց:

2.Վերականգնել Էդուարդ Ռոբերտի Հովհաննիսյանին / ծնված՝ 02.07.1966թ. /, Նարինե Ստյոպայի Բարեյանին/ ծնված՝ 23.02.1966թ. /, Գոռ Էդուարդի Հովհաննիսյանին/ ծնված՝ 01.11.1988թ. /, և Արտակ Էդուարդի Հովհաննիսյանին / ծնված՝ 02.03.1990թ. / պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայքնի Այգեվան գյուղում 04-062-0026-0024 կադաստրային ծածկագրով գույքային միավորների՝ 0.1762 հա օրինական հողամասի վրա 1996թ. կառուցված 182.7 քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ,իսկ բաց պատշգամբը և աստիճանը 3.3 քմ մակերեսով համարել ինքնակամ:

3.Ընդունել ի գիտություն,որ

1)կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2)շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Էդուարդ Ռոբերտի Հովհաննիսյանին,Նարինե Ստյոպայի Բարեյանին,Գոռ Էդուարդի Հովհաննիսյանին և Արտակ Էդուարդի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայքի Այգեվան գյուղի 04-062-0026-0024 կադաստրային ծածկագրով գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզ, Արմավիր համայք, Այգեվան գյուղ, 1-ին փողոց 42:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

6.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. հոկտեմբեր 16
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հոկտեմբերի 2023 թվականի N 1228-Ա

ԱՐԹՈՒՐ ԳԵՂԱՄՅԱՆԻՆ, ՇՈՂԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ, ԶԱՐՈՒՀԻ ԳԵՂԱՄՅԱՆԻՆ, ՍՈՆԱ ԳԵՂԱՄՅԱՆԻՆ, ԱԶՆԻՎ ԳԵՂԱՄՅԱՆԻՆ, ԱՐՄԵՆՈՒՀԻ ԳԵՂԱՄՅԱՆԻՆ, ՀԱՅԿ ԳԵԱՄՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմ բերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 45-րդ և 46-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու 2021թ. դեկտեմբերի 27-ի թիվ 126-Ն որոշումը, Հայկ Գեղամյանի 11.10.2023թ. թիվ 5679 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Արթուր Գեղամյանին, Շողիկ Հովհաննիսյանին, Զարուհի Գեղամյանին, Սոնա Գեղամյանին, Ազնիվ Գեղամյանին, Արմենուհի Գեղամյանին, Հայկ Գեղամյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր հ ամայնքի Սարդարապատ գյուղում գտնվող 0.16 հա մակերեսով գույքին (սեփականության վկայական
1174329) տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմա վիր համայնք, գյուղ Սարդարապատ 26-րդ փողոց, 2 բնակելի տուն:

2.Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գր անցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. հոկտեմբերի 16
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1229-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> N 600-Ն որոշման 2-րդ հավելվածի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ , 49-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ հունվարի 17-ի թիվ 01 արտահերթ նիստ 006-Ա որոշում հիմք ընդունելով Ճորճ Աբրահամի Գալայճեանի 15.09.2023թ. թիվ 5208 դիմումը և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր Արմավիր համայնքի Մայիսյան գյուղի 04-043-0845-0058 կադաստրային ծածկագրով հողամասում գտնվող կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ճորճ Աբրահամի Գալայճեանին /ծնված 01.01.1959թ./ սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Մայիսյան գյուղի Այգեգործական 2-րդ թաղամաս 2 հասցեում գտնվող գույքային միավորների՝ 507.0 քմ օրինական հողամասի վրա 1984թ. կառուցված 71.35

քմ ներքին և 91.25 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը ճանաչել օրինական,իսկ 2022 թվականին կատուցված խորդանոցը համարել ինքնակամ :

2.ՀՀ Կառավարության 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:

3. Ընդունել ի գիտություն, որ

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մայիսյան գյուղ Այգեգործական 2-րդ թաղամաս 2 հասցեում գտնվող գույքի հաշվառման (չափագրման)տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2023RF8D6P:

5.Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023 թ. հոկտեմբեր 16
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1230-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՔԻ ԼՈՒԿԱՇԻՆ ԳՅՈՒՂ, ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑ , 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ,13 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԱՅԻԿ ԲԵԳՅԱՆԻ ԵՎ ՌԻՄԱ ԲԵԳՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,Հայաստանի Հանրապետությանկառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, 50-րդ և 51-րդ կետերով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8, 11-րդ կետերով և 13-րդ կետի <<ա>> և <<բ>> ենթակետով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> N600-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին, 2-րդ 4-րդ կետով ,հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Լուկաշին գյուղ 04-047-0044-0007 կադաստրային ծածկագրով հողամասում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ հունվարի 17-ի թիվ 01 արտահերթ նիստ 006-Ա որոշում, Արայիկ Բեգյանի 13.06.2023 թվականի թիվ 3590 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արայիկ Բեգյանին և Ռիմա Բեգյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լուկաշին գյուղում գտնվող 04-047-0044-0007 կադաստրային ծածկագրով 1200.0 քմ մակերեսով տնամերձ հողամասին կից ավել զբաղեցրած 240.0 քմ մակերեսով հողամասը անհատույց հատկացնել նրանց՝ սեփականության իրավունքով, իսկ 960.0 քմ հողամասն օտարել ուղիղ վաճառքի միջոցով,

հողամասի կադաստրային արժեքի 30 %-ի չափով՝ 1 քմ հողամասի համար՝ 154.44 ՀՀ դրամ, ընդհանուր 148263 /մեկ հարյուր քառասունութ հազար երկու հարյուր վաթսուներեք/ դրամ:

2. Վերականգնել Արայիկ Բեգյանին/ծնված՝ 07.03.1964թ. / և Ռիմա Բեգյանին /ծնված 14.11.1965թ. / պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայքնի Լուկաշին գյուղում 04-047-0044-0007 կադաստրային ծածկագրով գույքային միավորների՝ 0.24 հա օրինական հողամասի վրա 1992թ. կառուցված 286.2քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ:

3.Ընդունել ի գիտություն,որ

1)կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2)շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Արայիկ Բեգյանին և Ռիմա Բեգյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայքի Լուկաշին գյուղի 04-047-0044-0007 կադաստրային ծածկագրով գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզ, Արմավիր համայք, Լուկաշին գյուղ, Զորավար Անդրանիկի փողոց,1-ին նրբանցք, 13:

5.Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023 թ. հոկտեմբեր 16
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1231-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,Հայաստանի Հանրապետությանկառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, 50-րդ և 51-րդ կետերով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8, 11-րդ կետերով և 13-րդ կետի <<ա>> և <<բ>> ենթակետով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> N600-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին, 2-րդ 4-րդ կետով ,հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Մ.Գորկու փողոց 42 հասցեում 04-001-0267-0026 կադաստրային ծածկագրով հողամասում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ հունվարի 17-ի թիվ 01 արտահերթ նիստ 006-Ա որոշում,ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը 03.03.2023թ. և Անժելա Միխայելի Տոնյանի 27.06.2023 թվականի թիվ 3824 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վերականգնել Անժելա Միխայելի Տոնյանին սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Մ.Գորկու փողոց 42 հասցեում 04-001-0267-0026 ծածկագրով գույքային միավորների՝ 660.3 քմ օրինական հողամասի վրա 1982թ. կառուցված 254.5 քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ:

2. Անժելա Միխայելի Տոնյանին սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Մ.Գորկու փողոց 42 հասցեում 04-001-0267-0026 ծածկագրով գույքային միավորների՝ 660.3 քմ օրինական հողամասի վրա 1982թ. կառուցված 5.8քմ մակերեսով խորդանոցը և 1982թ. կառուցված 5.8 քմ մակերեսով ծածկը ճանաչել օրինական:

3. ՀՀ Կառավարության 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:

4. Անժելա Միխայելի Տոնյանին սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Մ.Գորկու փողոց 42 հասցեում 04-001-0267-0026 ծածկագրով գույքային միավորների՝ 660.3 քմ մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված խանութը՝ 20.4 քմ ներքին և 17.1 քմ արտաքին մակերեսով ճանաչել օրինական:

5. Ընդունել ի գիտություն, որ

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

6.Սահմանել, որ ինքնակամ կառույցն իրականացրած անձը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով հաշվարկված՝ ընդհանուր 20.4 քմ մակերեսով ինքնակամ կառուցված հասարակական նշանակության շինության օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 20-ապատիկի չափով՝ 3938 ՀՀ դրամ ընդհանուր՝ 80335 (ութանասուն հազար երեք հարյուր երեսունինգ) ՀՀ դրամ:

7.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Մ.Գորկու փողոց 42 հասցեում գտնվող գույքի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2023JKDGV8:

8.Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. հոկտեմբեր 16
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հոկտեմբերի 2023 թվականի N 1232-Ա

ԱՇՈՏ ԿՆՅԱԶԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 45-րդ և 46-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու 2021թ. դեկտեմբերի 27-ի թիվ 126-Ն որոշումը, Աշոտ Բարսեղյանի 11.10.2023թ. թիվ 5676 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Աշոտ Կնյազի Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Հացիկ գյուղում գտնվող 0.141 հա մակերեսով գույքին (սեփականության վկայական 2479855) տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, գյուղ Հացիկ 2-րդ փողոց, 21/2 բնակելի տուն:

2.Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023թ. հոկտեմբերի 16
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1233-Ա

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 04-Ի ԹԻՎ 1024-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով քաղաքացի Արթուր Շիրվանյանի լիազորված անձ՝ Նարեկ Խաչատրյանի 2023 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 5715 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ուժը կորցրած ճանաչել Արմավիր համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 04-ի «Արթուր Գառնիկի Շիրվանյանին ընդլայնման նպատակով հողամաս հատկացնելու մասին» թիվ 1024-Ա որոշումն, իսկ դրա հիման վրա կնքված՝ 2023 թվականի օգոստոսի 04-ի՝ /սեղ. նո. 6848/ հողամասի վարձակալության պայմանագրում փոփոխություն և լրացում կատարելու մասին համաձայնագիրը լուծել:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. հոկտեմբեր 16
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1234-Ա

ՍԵՎԱԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29 դեկտեմբերի 2011թ թիվ 1920-Ն որոշման 54-րդ և 55-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2/փ-247 դրական եզրակացությունը, Արմավիր համայնքի ավագանու 29 սեպտեմբերի 2023թ «Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» թիվ 088-Ա որոշումը և Սևակ Պետրոսյանի լիազորված անձ՝ Արմեն Շառոյանի 03.02.2023թ թիվ 0730 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաք Ս.Շահումյան փողոց թիվ 40/1 հասցեում գտնվող,04-001-0067-0026 կադաստրային ծածկագրով Սևակ Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող 0.0115 հա արդյունաբերության,ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության՝ արդյունաբերական օբյեկտների հողերը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝հասարակական կառուցապատման հողերի գործառնական նշանակության:

2. Կատարել փոփոխությունը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արմավիր-3 համակցված տարածական պլանավորման փաստաթղթում

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. հոկտեմբեր 16
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1235-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետուպթյան Արմավիրի մարզի Արմավիր համայք Արմավիր քաղաքի Մաշտոցի փողոցի թիվ 3/1 կից գտնվող 33.4 քմ էներգետիկայի,տրանսպորտի,կապի,կոմունալ ենթակառուցվածքների էներգիայի հողերի օժանդակ շինության կառուցված 14.64 քմ ընդհանուր արտաքին մակերեսով և 13.9 քմ ներքին մակերեսով և ծածկը՝ 6.2 քմ մակերեսով ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև ելնելով այն հանգամանքից, որ ինքնակամ կառույցը համապատասխանում է հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերի նախատեսված գոտիներում գտնվող կառույցների ծրագրերի պայմաններին, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին մասով, 188-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին մասի 1.1 կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի հ. 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, 34 կետով, 35-րդ կետի <<բ>> ենթակետով, 35,1-րդ , 36-րդ կետերով, ՀՀ կառավարության 2011 թվականի թիվ 1920-Ն որոշման 24 կետի 3-րդ ենթակետով,հիմք ընդունելով կառույցն ինքնակամ իրականացրած ֆիզիկական անձ Ռիմիկ Չիլինգարյանի 02.06.2023 թ. Թիվ 3383 դիմումը և դրան կից ներկայացրած փաստաթղթերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի սեփականություն հանդիսացող՝ Մաշտոցի փողոցի թիվ 3/1 կից գտնվող 33.4 քմ մակերեսով օժանադակ շինության գործառնական նշանակության հողամասում կառուցված՝ ավտոտեխսպասարկման կետ գործառական նշանակության՝ 14.64 քմ ընդհանուր արտաքին մակերեսով և 13.9 քմ ներքին

մակերսով և ծածկը՝ 6.2 քմ մակերեսով ինքնակամ կառույցը, / ստորև նաև գույք / համարել Արմավիր համայնքի սեփականությունը և ճանաչել օրինական (կցվում է հողամասի հատակագիծն ու շինության բնութագիրը):

2.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի սեփականություն հանդիսացող՝ Մաշտոցի փողոցի թիվ 3/1 կից գտնվող 33.4 քմ մակերեսով բնակավայրերի այլ հողերի գործառնական նշանակությունը փոփոխել բնակավայրերի հասարակական կառուցապատման:

3. Գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ,Արմավիր համայնք,Արմավիր քաղաք Մաշտոցի փողոց 3/3 հասցեն:

4.Գույքի նկատմամբ պետական գրանցում կատարելուց հետո գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքի ձևով ձեռք բերելու առաջարկ կատարելկառույցն իրականացրած Ռիմիկ Չիլինգարյանը:

5.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիր համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝երկամսյա ժամկետում:

6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Մաշտոցի փողոց 3/3 հասցեում գտնվող գույքի հաշվառման (չափագրման)տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2023XGCGT8:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ.ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023 թ. հոկտեմբեր 16
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հոկտեմբերի 2023 թվականի N 1236-Ա

«ԱՐՄԱՎԻՐԻ ԵՐԿԱԹԲԵՏՈՆՅԱ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ-Ի ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.14-րդ հոդվածի, 275-283-րդ, 305-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 53-րդ, 58-60-րդ հոդվածների, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին առընթեր վարչական հանձնաժողովի 2023 թվականի հոկտեմբերի 5-ի թիվ 19/23 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.«Արմավիրի երկաթբետոնյա կոնստրուկցիաների գործարան» ՍՊԸ-ի նկատմամբ նշանակել վարչական տուգանք՝ առանց թույլտվության Արմավիր համայնքի անվանումը ֆիրմային անվանման մեջ օգտագործելու համար՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.14-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով՝ 80000 (ութսուն հազար) ՀՀ դրամի չափով:

2. «Արմավիրի երկաթբետոնյա կոնստրուկցիաների գործարան» ՍՊԸ պարտավոր է սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 15-օրյա ժամկետում նշանակված տուգանքի գումարը մուծել Արմավիրի համայնքապետարանի 900335201498 հաշվեհամարին և վճարման անդորրագիրը ներկայացնել Արմավիր համայնքի ղեկավարին առընթեր վարչական հանձնաժողովին:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Արմավիրի երկաթբետոնյա կոնստրուկցիաների գործարան» ՍՊԸ-ին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և/կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023թ հոկտեմբերի 17
Ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հոկտեմբերի 2023 թվականի N 1237-Ա

«ԱՐՄԱՎԻՐԻ ԿԱԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ-Ի ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.14-րդ հոդվածի, 275-283-րդ, 305-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 53-րդ, 58-60-րդ հոդվածների, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին առընթեր վարչական հանձնաժողովի 2023 թվականի հոկտեմբերի 5-ի թիվ 20/23 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.«Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ի նկատմամբ նշանակել վարչական տուգանք՝ առանց թույլտվության Արմավիր համայնքի անվանումը ֆիրմային անվանման մեջ օգտագործելու համար՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.14-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով՝ 80000 (ութսուն հազար) ՀՀ դրամի չափով:

2.«Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ պարտավոր է սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 15-օրյա ժամկետում նշանակված տուգանքի գումարը մուծել Արմավիրի համայնքապետարանի 900335201498 հաշվեհամարին և վճարման անդորրագիրը ներկայացնել Արմավիր համայնքի ղեկավարին առընթեր վարչական հանձնաժողովին:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և/ կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023թ հոկտեմբերի 17
Ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1238-Ա

«ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 3 ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի 2023Թ. ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով, Արմավիր համայնքի ավագանու 26.12.2022թ. թիվ 217-Ն որոշման 8-րդ կետով և հիմք ընդունելով «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 3 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի ժ/պ-ի 10.10.2023թ. թիվ 5652 զեկուցագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.«ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 3 մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ծախսերի «Էներգետիկ ծառայություններ» 4212 հոդվածի բնական գազի խնայված գումարներից պակասեցնել 89,5 հազար դրամ և ավելացնել «Հատուկ նպատակային այլ նյութեր» 4269 հոդվածին՝ նոր բացվող սանհանգույցի վերանորոգման համար անհրաժեշտ նյութեր ձեռք բերելու համար:

2. «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 3 մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ծախսերի նախահաշվում կատարել համապատասխան փոփոխություններ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. հոկտեմբերի 17
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1239-Ա

ԱՐԹՈՒՐ ԳԱՌՆԻԿԻ ՇԻՐՎԱՆՅԱՆԻՆ ԸՆԴԼԱՅՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետությանհողային օրենսգրքի 48[1] հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. N 286 որոշման 46.2 կետի «բ» ենթակետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Արմավիրի համայնքապետարանի և Արթուր Գառնիկի Շիրվանյանի միջև 2019 թվականին դեկտեմբերի 05-ին կնքված՝ /սեղ. նո 11739 / հողամասի վարձակալության պայմանագիրը վերաձևակերպել նոր խմբագրությամբ՝ որպես կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր:

2.Արթուր Գառնիկի Շիրվանյանին հատկացված 1600.0 քմ մակերեսով, կառուցապատման իրավունքով հողամասն ընդլայնել 627.0 քմ մակերեսով:

3.Սույն որոշման 2-րդ կետով նշված 2227.0 քմ ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասի համար թողարկել նոր հատակագիծ:

4.Իրավաբանական բաժնին՝ Արթուր Գառնիկի Շիրվանյանի հետ կնքել համաձայնագիր՝ ապահովելով նույն որոշման 1-ին և 2-րդ կետերի կատարումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023 թ. հոկտեմբեր 17
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1240-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ Ա.ԽԱՆՋՅԱՆ ՓՈՂՈՑ 39 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԱՐՏԻՐՈՍ ՍԵՐԳՈՅԻ ԶՈՀՐԱԲՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,Հայաստանի Հանրապետությանկառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, 50-րդ և 51-րդ կետերով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8, 11-րդ կետերով և 13-րդ կետի <<ա>> և <<բ>> ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> N600-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին, 2-րդ 4-րդ կետով ,հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի գյուղ Մյասնիկյան 04-066-0029-0043 կադաստրային ծածկագրում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ հունվարի 17-ի թիվ 01 արտահերթ նիստ 006-Ա որոշում, ըստ 11.09.2023թ. ժառանգության իրավունքի վկայագրի և Մարտիրոս Սերգոյի Զոհրաբյանի լիազորված անձ Արտաշես Մարտիրոսի Զոհրաբյանի 22.09.2023 թվականի թիվ 5330 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Քաղաքացի Մարտիրոս Սերգոյի Զոհրաբյանին /ծնված՝ 08.03.1964թ./ պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի գյուղ Մյասնիկյան 04-066-0029-0043 կադաստրային ծածկագրում գտնվող 600.0 քմ մակերեսով

հողամասին կից ավել զբաղեցրած 20.0 քմ մակերեսով հողամասը անհատույց հատկացնել նրան՝ սեփականության իրավունքով:

2.Վերականգնել Մարտիրոս Սերգոյի Զոհրաբյանին ժառանգության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի գյուղ Մյասնիկյան 04-066-0029-0043 կադաստրային ծածկագրում գտնվող 620.0 քմ օրինական հողամասի վրա /որից 103.5 քմ ընդհանուր օգտագործման/ 1960թ կառուցված 92.1 քմ մակերեսով բնակելի տան, 1990թ. կառուցված 5.9 քմ մակերեսով խոհանոցի, 1990թ. կառուցված 4.3 քմ մակերեսով բաղնիքի, 1990թ. կառուցված 14.0 քմ մակերեսով ծածկի, 1985 կառուցված 27.4 քմ. մակերեսով մառանի, 1996թ կառուցված 7.8 քմ մակերեսով անասնաշենքի և 1996թ կառուցված 8.1 քմ մակերեսով անասնաշենքի նկատմամբ:

3.Ընդունել ի գիտություն,որ

1)կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2)շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

